

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ  
ՏԵՐՄԻՆԱՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
Ավագյան Ա. Ա.

Հողվածում ներկայացված են ժամանակակից հայ լեզվաբանական տերմինագիտության, նրա նոր ենթահամակարգերից տեքստաբանությանն առնչվող հարցերը, առաջին անգամ ներկայացվել են տեքստաբանական հիմնական տերմինների ընդհանուր (մակրո-) և մանրա(միկրո-) համակարգերը, տեքստաբանական նորաստեղծ տերմինները, քննության են առնվել տերմինակազմության հարցերը, նշվել են այն հիմնական միջոցներն ու եղանակները, որոնցով շարունակաբար համալրվում է հայ լեզվաբանական տերմինահամակարգը, առանձնացվել են տերմինակերտման գործում հիմնական, առավել ակտիվ բառակազմական միջոցները:

**Բանալի բառեր.** տերմինաբանություն, տեքստագիտություն, տերմինակազմություն, նախադասություն, պարբերություն, ասույթ, տեքստ, համատեքստ, տեղաշարժ, ներհամակարգային տերմին, տերմինային կապակցություն:

Տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքին, տեխնիկային բնորոշ հասկացություններ արտահայտող բառը կամ բառակապակցությունը ընդունված է կոչել *տերմին*<sup>1</sup> (*գիտաբառ, անվանում*, արևմտահայերենում՝ *եզր, եզրույթ*), իսկ տերմինների տեսության և կիրառության զանազան հարցերով զբաղվող բաժինը՝ *տերմինաբանություն*<sup>\*</sup> (*տերմինագիտություն*)<sup>\*\*</sup>:

<sup>1</sup> Հ. Պետրոսյան, Հայրենագիտական բառարան, «Հայաստան», Ե., 1987, էջ 578:

<sup>\*</sup> Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Ե., 1999, էջ 170 և՛ Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, ԵՊՀ հրատ., Ե., 1987, էջ 424:

<sup>\*\*</sup> Տերմինաբանությունը բառագիտության բաժին է, որն զբաղվում է տերմինների տեսության և կիրառության զանազան հարցերով: Այս իմաստով երբեմն կիրառվում է նաև *տերմինագիտություն* եզրը: Եթե *տերմինաբանությունն* ուսմունք է լեզվում գոյություն ունեցող տերմինների ամբողջության ու տերմինահամակարգերի մասին, այս նշանակությամբ *տերմինա-*

Տերմինները հիմնականում *մենիմաստ բառեր են* (չնայած կա նաև *տերմինային բազմիմաստություն*)<sup>\*\*\*</sup>, որոնց հիմքում ընկած է գիտական սահմանումը: Դիպուկ է նկատել Էդ. Ադայանը, որ «տերմինային իմաստը ճշգրտորեն սահմանելի հասկացություն է»<sup>2</sup>:

Տերմիններն ամբողջանում են *տերմինահամակարգերում*<sup>Բ</sup>: Տերմինների համակարգումը կատարվում է ըստ համապատասխան ոլորտի տերմինաբանական բնագավառների, գիտակարգերի, մասնագիտությունների, գիտաճյուղերի, ինչպես նաև դրանց ներսում<sup>4</sup>, այսինքն՝ *ներհամակարգային դասակարգում* և *ենթադասակարգում* (Ա. Ա.) է կատարվում: Ցանկացած բնագավառի տերմիններ համակարգվում են որոշակի *աստիճանակարգությամբ* (ստորակարգային (հիերարխիկ) դասակարգմամբ) և կարող են ներկայանալ ինչպես *ամբողջական, ընդհանուր (մակրո-)*, այնպես էլ *մասնակի, փոքր (միկրո-)* *համակարգերով*՝ դասակարգվելով վերնից ներքև կամ հակառակը:

Լեզուն կենդանի, զարգացող օրգանիզմ է, ինչն էլ նշանակում է, որ հասարակական-քաղաքական կյանքի, գիտության, տեխնիկայի, արվեստի ու գրականության զարգացումն ու առաջընթացը առաջին հերթին հանգեցնելու են լեզվի տերմինաբանական բառապաշարի աճին ու համալրմանը, դրա կատարելագործմանը, ինչն էլ ենթադրում է ոչ միայն լեզվաբանական տերմինահամակարգի ընդլայնում և նոր ենթահամակարգերի առաջացում իրենց *ընդհանուր (մակրո-)* *համակարգերով* և մանրահամակարգերով (*միկրո-)*, *այլև* տերմինաշինության զարգացում, կատարելագործում, նոր տերմինների ստեղծում: Չարգացումները ժամանակակից հայերենի լեզվաբանական տերմինահամակարգում պայմանավորված են ինչպես լեզվական համապատասխան ենթահամակարգերի և նրանց հիմնական հասկացություններն արտահայտող բառերի՝ տերմինների ի հայտ գալով, այլև տերմինաշինությամբ: *Տերմինաշինությունը* (*տերմինակերտություն, եզրաշինություն*) *տերմինաբանության* հարակից բնագավառ է, որը, պայմանավորված գիտական, հասարակական-քաղաքական, մշակութային,

---

**գիտություն** է բառագիտության ենթաբաժին է դիտվում, երբեմն էլ՝ իբրև ինքնուրույն բնագավառ, լեզվաբանական առանձին գիտակարգ կամ գիտաճյուղ (Տե՛ս Էդ. Ադայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 424):

<sup>\*\*\*</sup> Տերմինն ինքնին մենիմաստ է, սակայն, երբ միևնույն տերմինը գործառվում է մի քանի համակարգերում (*միջհամակարգային տերմիններ*-Ա.Ա.), նման դեպքում գործ կունենանք արդեն տերմինային բազմիմաստության հետ (օրինակ՝ *ասուլիս* տերմինը որպես գրականագիտական, լեզվաբանական (քերականական) և տեքստաբանական տերմին):

<sup>2</sup> Տե՛ս Էդ. Ադայան, Նշված աշխատություն, էջ 432:

<sup>3</sup> Հ. Պետրոսյան, Նշված աշխատություն, էջ 579:

<sup>4</sup> Հ. Պետրոսյան, Նույն տեղում:

մարզական բնագավառների առաջընթացով ու զարգացմամբ, անցնում է զարգացման նոր փուլ, ինչի արդյունքում էլ լեզուն համալրվում է մասնագիտական նոր բառերով՝ տերմիններով: Օրինակ, եթե ավանդական լեզվաբանության մեջ ժամանակակից հայերենի համակարգը ներկայացվում էր *հնչյուն-բառ-նախադասություն* եռաստիճան բաժանմամբ, ապա այժմ դրան փոխարինելու է եկել *հնչյուն-բառ-նախադասություն-տեքստ* քառաստիճան համակարգը\*, քանի որ տեքստաբանությունը (տեքստագիտություն)<sup>5</sup>, տեքստի ոճագիտությունը դարձել են լեզվաոճագիտական ուսումնասիրության առարկա, ինչն էլ իր հերթին ազդել է (ու շարունակում է ազդել) լեզվաբանական տերմինահամակարգի վրա՝ վերջինս համալրելով տեքստաբանական, տեքստաոճաբանական նոր տերմիններով ու տերմինային կապակցություններով կամ էլ եղած տերմինների՝ նոր իմաստային կիրառություններով (*միջհամակարգային կամ ներհամակարգային տերմիններ*):

Մինչ տեքստի մասին գիտության՝ **տեքստաբանության** կամ **տեքստագիտության** հիմնավորվելը՝ լեզվաբանությունն իր հետազոտությունը կենտրոնացրել է *նախադասության*՝ որպես ամենաձավալուն միավորի վրա՝ սույն դեպքում նկատի չունենալով *շարույթը* կամ *պարբերությունը*: Սակայն 20-րդ դարի առաջին տասնամյակներից արդեն **տեքստաբանության (տեքստագիտության)**՝ որպես լեզվաբանության առանձին գիտակարգի (բաժնի) ընդունումը կամ ըմբռնումը առիթ հանդիսացավ տեքստաբանական տերմինների կերտման, եղած տերմինների՝ նոր իմաստներով կիրառման (*ներհամակարգային տերմիններ*-Ա. Ա.), օտարաբան տարբերակները հայեցի ձևերով փոխարինելու համար: Ստեղծված հայեցի տարբերակներին զուգահեռ շարունակում էին (և շարունակում են) կերտվել նորերը՝ որպես նույնանիշ, համարժեք տերմիններ, որոնցով հասկացության, երևույթի բովանդակությունն ավելի ամբողջական ու դիպուկ կարտահայտվի: Իբրև ավելի ուշ ճանաչված բնագավառ՝ տեքստաբանությունն ու տեքստաբանական տերմինները մնացել են ստվերում, այնինչ այս բնա-

\* Տե՛ս Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, Ե., «Լույս», 1994: և՝ Լ. Եզեկյան, Ա. Մարգարյան, Ռ. Մաքսպետոյան, Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի 10-րդ դասարանի համար, Ե., 2009:

<sup>5</sup> Հաշվի առնելով տեքստի ըմբռնման լայն և նեղ մոտեցումները՝ տեքստային մակարդակում ևս կունենանք տերմինային նույն զուգահեռը (*տեքստաբանություն* և *տեքստագիտություն. առաջին դեպքում կունենանք լեզվաբանական համակարգ, երկրորդ դեպքում՝ լեզվի ենթահամակարգ, բաժին*), ինչը ունենք բառագիտական մակարդակում (*տերմինաբանություն* և *տերմինագիտություն*): Հավանաբար նման տարակարծություններից զերծ մնալու նպատակով է, որ Թ. Շահվերդյանը գործածում է *տեքստի լեզվաբանություն* տերմինային կապակցությունը:

գավառում կան մեծաքանակ տերմիններ իրենց մակրո- և միկրոհամա- կարգերով: Եթե տեքստաբանությունը դիտարկենք լեզվի բաժիններից մեկը՝ ամենամեծը՝ *գերշարահյուսականը* կամ *վերշարահյուսականը*\* (*հնչյուն, բառ, նախադասություն, տեքստ*), ապա տեքստաբանական ենթահամակարգում մենք կունենանք այնպիսի տերմիններ, ինչպիսիք են *շարույթը, պարբերությունը, ենթահիմքը, ասույթը, տեքստը, համա- տեքստը (կոնտեքստ, բնագիր, խոսքաշար, բանահյուսվածք)\*, նախաբերությունն ու հետաբերությունը, վերնագիրն ու բնաբանը, առաջաբանը, ներածությունն ու վերջաբանը* (վերջիններս՝ որպես տեքստի կառուցվածքային տարրեր), *ցանկ, ամփոփում, ծանոթագրություն, հավելված, տեքստի ոճաբանություն, տեքստի լեզվաբանություն, բնագրագիտություն* և այլն:

Բնականաբար, նորաստեղծ ձևերը երբեմն դառնում են նաև հավելյալ ձևեր: Այսպես, **կոնտեքստ** (լատ. *կցում, միացում, կապ բառից*) ձևին զուգահեռ այսօր տեքստագիտական ենթահամակարգում նույն իմաստով գործածվում են հայեցի չորս տարբերակ ևս՝ *համատեքստ, խոսքաշար, բանահյուսվածք, բնագիր*<sup>6</sup>:

Տեքստաբանական ենթահամակարգում, եթե փորձենք աստիճանա- կարգորեն ներկայացնել մանրահամակարգը վայրընթաց (վերևից ներքև) կամ ներքևից վերև (վերընթաց) դասակարգմամբ, ապա կարող ենք ունե- նալ հետևյալ դասակարգումը. ինչպես՝ **տեքստ-համատեքստ-բարդ շարահյուսական ամբողջություն-պարբերություն-նախադասություն /վայրընթաց/ և՝ նախադասություն-պարբերություն-համատեքստ- տեքստ /վերընթաց/**: Նույն սկզբունքով կարելի է կատարել տեքստաբանական տերմինների այլ ենթահամակարգումներ ևս,

\* *Գերշարահյուսական* կամ *վերշարահյուսական* տերմինների փոխարեն Թ. Շահվերդյանը գոր- ծածում է **լեզվի առավելագույն կառուցվածքային միավոր** կապակցությունը՝ հավելելով. «... որի մեջ պարունակվում են մյուս կառուցվածքային մակարդակների միավորները՝ հնչյունը, բառը, ձևույթը և նախադասությունը» (Տե՛ս Թ. Շահվերդյան, Ոճագիտություն, «Լուսակն», Ե., 2010, էջ 226):

\*\* **Համատեքստ** տերմինն ավելի ընդգրկուն ու համապարփակ է արտահայտում նշված տեքստաբանական իրողությունը՝ ի տարբերություն մյուս զուգահեռ ձևերի, որոնք *կոն- տեքստ* տերմինի բովանդակությունը միակողմանի են արտահայտում. օրինակ՝ *բնագիր* տերմինն ընկալվում է գրականագիտական տեսանկյունից, *բանահյուսվածք* կամ *խոսքաշար տերմինները՝ լեզվաոճաբանական տեսանկյունից*:

<sup>6</sup> Տե՛ս Ա. Ավագյան, Տեքստաբանական տերմիններ. նորաստեղծ ձևեր և հավելյալ տարբերակներ, «Լեզվաբանական տերմինաբանության հարցեր» հանրապետական գիտաժողովի (25.10.2019թ.) նյութերի ժողովածու://Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Լեզվաբանական հետազոտությունների լաբո- րատորիա, Ե., 2020, 7 էջ (գտնվում է տպագրության մեջ):

ինչպես, օրինակ, տեքստի կառուցվածքային տարրերի համակարգը՝ *բնաբան - վերնագիր- առաջաբան /ներածություն - հիմնամաս- վերջաբան/ամփոփում-ցանկ-համառոտագրություններ-հավելված* կամ՝ *տեքստ-համատեքստ-նախաբերություն-հետաբերություն-ասույթ-ենթա- հիմք* և նման այլ մանրահամակարգեր տեքստաբանական տերմինահամակարգում:

Տեքստաբանական տերմինների կերտման և կիրառման տեսակետից ուշագրավ է Գ. Ջահուկյանի մոտեցումը: *Տեքստ* տերմինի փոխարեն լեզվաբանը գործածում է **հենք** ձևը, իսկ **լիահինույթ, հինույթ /պարբերություն/, գերպարբերություն** /պարբերությունների միացումներ/<sup>7</sup>, **ասույթ, լիասույթ** նորակազմ տարբերակները ձևակերպում և սահմանում է այսպես. «Լիահինույթի անվան տակ մենք հասկանում ենք հենքի /տեքստի/ բարձրագույն միավորը, այսինքն՝ տեքստը որպես պարբերությունների լիակատար ամբողջություն, որով սպառվում է այն ամենը, ինչ ասվում է հեղինակի կամ հեղինակների կողմից:

Պարբերության /**հինույթի**/ և լիահինույթի միջև առկա է մոտավորապես նույն հարաբերությունը, ինչ պարզ նախադասության /**ասույթի**/ և նախադասությունների ամբողջության /**լիասույթի**/ միջև՝ այն տարբերությամբ, որ այս դեպքում այդ հարաբերությունն ավելի բարդ է և բազմակողմանի»<sup>8</sup>:

Գ. Ջահուկյանն իր ուսումնասիրությունները սովորաբար ներկայացնում է կադապարների կամ բանաձևերի միջոցով: Այս պարագայում ևս լեզվաբանը ձեռնպահ չի մնացել և մանրամասն ներկայացրել է տեքստաբանական ենթահամակարգի առանցքային մանրահամակարգերից պարբերության կադապարները, խոսել **կադապար** և **փոխկադապարում**\* հասկացությունների, **համասեռ և տարասեռ** կադապարների ու **շարույթների** մասին: Հիշյալները առանձին-առանձին կարելի է դիտել որպես տեքստաբանական տերմիններ, այլ բան է, որ սրանց մեջ կան նաև այնպիսի նորաստեղծ ձևեր, որոնք դառնում են *հավելյալ* և շատ հաճախ, չգործածվելով, դուրս են մնում **ակտիվ տերմինահամակարգից** /Ա. Ա./՝ համալրելով *պասիվ տերմինաշերտը* /Ա. Ա./:

<sup>7</sup> Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., ՀՀ ԳԱԱ, Հ. Աճառյանի անվ. ԼԻ, «Ասողիկ», Ե., 2003, էջ 71:

<sup>8</sup> Նույն տեղում:

\* Տե՛ս Նշված աշխատություն, էջեր 6; 8:

Տերմինների ստեղծման աղբյուր են ինչպես լեզվի զարգացման տարբեր փուլերի բառապաշարը՝ իր համագործածական բառաշերտի բառերի տերմինացմամբ, այնպես էլ փոխառությունները, իսկ նորակերտ ձևեր ստեղծվում են հայերենի բառակազմական միջոցներով ու եղանակներով. «Հայերենի տերմինակազմության հիմնական միջոցը հայերենի բառակազմական ներքին հնարավորություններն են»<sup>9</sup>:

Լեզվում նոր ենթահամակարգերի առանձնացումը, ուսումնասիրության առարկայի սահմանումը ինքնին ենթադրում է նոր տերմինի «ծնունդ» կամ եղած ընդհանուր բառապաշարի *սովորական բառի տերմինացում*, որն ավելի նախընտրելի իրողություն է համարվում, քան *փոխառյալ կամ օտար տերմինի* գործածությունը, ինչի կապակցությամբ Ս. Ասլանյանը գրել է, որ «...օտար տերմիններն ունեն նաև իրենց բացասական կողմերը. ա/դժվար են հասկացվում, դժվար են յուրացվում ու հիշվում, բ/ խանգարում են լեզվի մաքրությանը: ...Օտար տերմինները հաճախ փոխառվում են առանց անհրաժեշտության և համակարգից դուրս, որի հետևանքով խախտվում է տերմինաբանության համակարգայնությունը: Մասսայական փոխառությունները ոչ թե հարստացնում են լեզուն տերմիններով, այլ աղտոտում են այն»<sup>\*</sup>: Այդ իսկ պատճառով ցանկացած լեզվում ձգտում են ստեղծել սեփական բառակազմական միջոցներով ու եղանակներով տերմիններ: Այս առումով ուշագրավ հանգամանք է այն, որ *ածանցմամբ տերմինակազմության* դեպքում հայերենում առավել ակտիվ են վերջածանցները, չնայած քիչ չեն նաև նախածանցավոր (*ան-, ապ-, արտ-, գեր-, ենթ-, հակ-, ներ-, վեր-, տար-*) ձևերը: Եթե մինչև 20-րդ դարի 80-ական թվականները գիտատեխնիկական տերմինակազմության գործում նշվում էր 150-ից ավելի ածանց (*ինչպես՝ որդի, իչ, ուկ, ուն, ան, ակ, իկ, անի, ուրդ, ոց, ովի, ք/լուծարք/, ավոր, ուք*)<sup>\*\*</sup>, ապա ժամանակակից փուլում դրանց կիրառմանը զուգընթաց գործածվում են նոր ու կենսունակ ձևեր ևս:

Որպես լեզվաբանական տերմին՝ հիմնականում կիրառվում են գոյականներն ու ածականները, ուստի «լեզվաբանական տերմինների կազմությանն առավել ակտիվ մասնակցում են հիմնականում գոյականա-

<sup>9</sup> Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու (Հնչունաբանություն, բառագիտություն), Ե., ԵՊՀ հրատ., 2017, էջ 207:

<sup>\*</sup> Տե՛ս Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., Ե., 1982, էջ 215:

<sup>\*\*</sup> Տե՛ս Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության, էջ 181:

կերտ և ածականակերտ վերջածանցները: Առաջին կարգի վերջածանցներից են՝ *-ած, -ակ, -յալ, -յուն, -ություն, -ում, -ույթ և այլն*<sup>10</sup>:

Վերջին տասնամյակներում լեզվաբանական տերմինահամակարգում շրջանառվում են բազում նոր տերմիններ, որոնց մեջ կազմության տեսանկյունից կենսունակությամբ աչքի են ընկնում *-ույթ* ածանցով կազմվածները (*ոճույթ, հակադրույթ, հակասույթ, բառույթ, հինույթ, խոսույթ և այլն*): Հիշյալ ածանցով նախկինում էլ ենք ունեցել լեզվաբանական շատ տերմիններ, սակայն վերջին տասնամյակներում նկատվում է ածանցի գերկենսունակություն: Եթե *-ույթ* վերջածանցով ժամանակին կազմվում էին հատուկենտ տերմիններ, ապա խորհրդային շրջանից հայ լեզվաբանական տերմինակազմության մեջ ակտիվացավ այս ածանցը, իսկ 20-րդ դարի վերջին տասնամյակներից արդեն դրսևորում է գերկենսունակություն լեզվաոճական, տեքստաբանական տերմինների կերտման գործում: Ուշագրավ է Լ. Ղազանչյանի դիտարկումը, թե «ժամանակակից լեզվաբանության այսպես կոչված *-ույթ*-ային տերմինաբանության, որն արտացոլում է լեզվի նկատմամբ երկաստիճան մոտեցումը, հիմքում ընկած է լեզվի կառուցվածքի միավորների և նրանց՝ խոսքում կոնկրետ դրսևորման հակադրությունը: Փաստորեն *-ույթ* ածանցը ցույց է տալիս լեզվական տարբեր միավորների կառուցվածքային բնույթը: Այսպես, օրինակ՝ *հնչույթ, ձևույթ, բառույթ, գրույթ, ասույթ, արժույթ, թեքույթ, իմաստույթ, կցույթ, հերթագայույթ, ներույթ, շրջույթ, տիրույթ, տրոհույթ, քերականույթ և այլն*»<sup>11</sup> Այս կադրապարի (*բառ կամ բառի բաղադրիչ-ույթ*) կենսունակությունը, ըստ Լ. Ղազանչյանի, ապացուցվում է այն փաստով, որ օտարալեզու բազմաթիվ տերմինների թարգմանության դեպքում որպես բառակազմական միջոց հիմնականում օգտագործվում է *-ույթ* վերջածանցը: Հիշյալ ածանցով Գ. Ջահուկյանը շրջանառության մեջ է դրել նաև *բառույթ* (բառահիմք), *դասույթ* (բառաձև), *լրահինույթ* ձևերը: Լեզվաբանը տվել է նաև դրանց բացատրությունը, այսպես՝ «...*բառույթի* նվազագույն դրսևորումը՝ պարզ բառը, արմատն է, *դասույթի* նվազագույն դրսևորումը՝ զրո թեքությամբ դասույթը (բառաձևը)՝ բառույթը, լրացումներից գուրկ *շարույթը*՝ դասույթը»<sup>12</sup>

<sup>10</sup> Լ. Ղազանչյան, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային և իմաստային վերլուծություն, Լեզվի և ոճի հարցեր, հ. IV, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., Ե., 1977, էջ 286:

<sup>11</sup> Լ. Ղազանչյան, Նշված աշխատություն, էջ 288-289:

<sup>12</sup> Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, էջ 13:

Այլ *ածանցներով (-ում, -ակ* նույնպես կենսունակ ածանց են եղել հայ լեզվատերմինակերտման (լեզվաբանական տերմինների ստեղծում-Ա. Ա.) գործում. ինչպես՝ *զեղչում, ստորոգում, ոճավորում, ամանակ, եղանակ, ձևակ*) և *բառակազմական եղանակներով* ևս կազմվում են տերմիններ, ստեղծվել ու ստեղծվում են *տերմինային կապակցություններ* (օրինակ՝ *բարդ շարահյուսական ամբողջություն, տեքստի լեզվաբանություն, լեզվի առավելագույն կառուցվածքային միավոր*): Տերմինաստեղծման գործում դեր ունի նաև *պատճենումը* (ինչպես՝ *անհսկական (ոչ սեփական) ուղղակի խոսք՝ несобственная прямая речь*)<sup>13</sup>: Տեքստաբանական ենթահամակարգում, օրինակ, գործառվում է ***բարդ շարահյուսական ամբողջություն*** տերմինային կապակցությունը՝ թարգմանված ռուսերենից, որտեղ վերոնշյալը և ***պարբերությունը*** միմյանցից տարբերակված լեզվական իրողություններ են: Հայերենում լեզվական այս իրողություններն իրարից տարբերակելը երբեմն ոչ միայն բարդ է, այլև անհնար\*։ ***Բարդ շարահյուսական ամբողջությունը համարվում է կառուցվածքախմաստային միավոր, պարբերությունը՝ ոճակառուցվածքային***։\*\* *Իմաստային ու գործառական այս տարբերությամբ էլ սրանցով համայրվել է հայ լեզվաբանական տերմինահամակարգը*։

Այսպիսով, զարգացումները լեզվաբանական տերմինահամակարգում պայմանավորված են համապատասխան բնագավառում նոր ենթահամակարգերի ի հայտ գալով, ինչն էլ իր հերթին ենթադրում է մի կողմից նոր տերմինների ստեղծում, մյուս կողմից՝ տվյալ համակարգում եղած տերմինների հավելյալ ձևերի ստեղծում, վերանայում, եղածի կիրառում անհրաժեշտ ենթահամակարգում (օրինակ՝ *նախադասություն* տերմինը ոչ միայն քերականական, այլև տեքստագիտական ենթահամակարգում), ինչն էլ առաջ է բերում *ներհամակարգային* և *ներենթահամակարգային տերմիններ*, կամ էլ նոր, հավելյալ ձևերի ստեղծման պատճառ է դառնում, իսկ ժամանակակից լեզվատերմինակազմության գործում ակտիվ են *-ույթ* վերջածանցը, բառաբարդումը, տերմինային կապակցությունները (*կապակցական տերմիններ*- Ա. Ա.): Վերջիններս

<sup>13</sup> Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Գ. 1, ԵՊՀ հրատ., Ե., 1990, էջ 90:

\* Տե՛ս Ա. Ավագյան, Տեքստաբանական տերմիններ. նորաստեղծ ձևեր և հավելյալ տարբերակներ, «Լեզվաբանական տերմինաբանության հարցեր» հանրապետական գիտաժողովի (25.10.2019թ.) նյութերի ժողովածու։//Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա, Ե., 2020:

\*\* Տե՛ս Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Ե., 1991, էջ 368:



հիմնականում օտար լեզուներից (հատկապես ռուսերենից) թարգմանությունների կամ պատճենումների միջոցով ստեղծվող ձևերն են:

## ЗАМЕЩЕНИЕ В АРМЯНСКОЙ ЛИНГВИСТИЧЕСКОЙ ТЕРМИНОЛОГИЧЕСКОЙ СИСТЕМЕ

Авагян А. А.

В статье представлены вопросы современной армянской лингвистической терминологии и её новых текстологических подсистем. Представлены общие макро- и микроэлементы основных терминов текстологии, а так же недавно созданные текстологические термины.

В статье рассмотрены вопросы составления терминов, отмечены основные средства и способы, посредством которых восполняется армянская лингвистическая терминологическая система, а так же выделены собенно активные словообразовательные средства, которые используются в составлении терминов.

**Ключевые слова:** терминология, текстология, изречение, составление терминов, предложение, абзац, текст, контекст, передвижение, внутрисистемные термины, сочетания терминов.

## DEVELOPMENTS IN THE ARMENIAN LINGUISTIC TERM SYSTEM

Avagyan A. A.

The article presents the issues related to modern Armenian linguistic terminology, textual criticism from its new subsystems, as well as presents the general (macro) and micro systems of basic textual terms, the newly created terms of text-critical origin; the issues of term formation have been investigated, the main ways and methods have been stated, by which the Armenian linguistic term system is constantly replenished, the main, most active word formation means in term formation have been distinguished.

**Keywords:** terminology, text studies, term formation, sentence, indent, utterance, text, context, shift, inter-systemic term, term combination.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբարության: Ե.: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.: 1982: 316 էջ:

2. Էդ. Աղայան Լեզվաբանության հիմունքներ: ԵՊՀ հրատ.: Ե.: 1987: 736 էջ:
3. Ավագյան Ա. Տեքստաբանական տերմիններ.: նորաստեղծ ձևեր և հավելյալ տարբերակներ:// «Լեզվաբանական տերմինաբանության հարցեր» հանրապետական գիտաժողովի (25.10.2019թ.) նյութերի ժողովածու:// Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ: Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա: Ե.: 2020: 7 էջ (գտնվում է տպագրության մեջ):
4. Ավետիսյան Ջ. Տեքստաբանություն: Ե.: «Վան Արյան»: 2000: 118 էջ:
5. Գարեգինյան Գ. Ժամանակակից հայոց լեզու.: Բարդ նախադասություն: Ե. ԵՊՀ հրատ.: 1991: 432 էջ:
6. Եզեկյան Լ.: Սարգսյան Ա.: Սաքապետոյան Ռ. Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի 10-րդ դասարանի համար: Ե.: 2009:
7. Ղազանչյան Լ. Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային և իմաստային վերլուծություն: Լեզվի և ոճի հարցեր: Հ. IV: Ե.: Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ.: 1977: էջ 200-328:
8. Շահվերդյան Թ.: Ոճագիտություն: Ե. «Լուսակն»: 2010: 269 էջ:
9. Պետրոսյան Հ. Հայրենագիտական բառարան: Ե.: «Հայաստան»: 1987: 688 էջ:
10. Պողոսյան Պ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները: Գ.1:Ե.: ԵՊՀ հրատ.: 1990: 420 էջ:
11. Ջահուկյան Գ.: Խլղաթյան Ֆ. Հայոց լեզու: Ե.: «Լույս»: 1994: 290 էջ:
12. Ջահուկյան Գ. Շարահյուսական ուսումնասիրություններ: Ե.: «Աստղիկ»: 2003: 165 էջ:
13. Սուքիասյան Ա. Ժամանակակից հայոց լեզու: Ե.: ԵՊՀ հրատ.: 1999: 352 էջ:
14. Սուքիասյան Ա.: Սուքիասյան Բ.: Ֆելեքյան Մ. Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն): Ե.: ԵՊՀ հրատ.: 2017: 462 էջ:

**Տեղեկություններ հեղինակի մասին**

*Ավագյան Ա. Ա. – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

*Շիրակի պետական համալսարան*

*Էլ. փոստ [arm5\\_83\\_7@mail.ru](mailto:arm5_83_7@mail.ru)*

*Տրվել է խմբագրություն 05.11.2019*